

ԲԱՐԵԿԱՄ

Պէտք է բարեկամ ճանչնալ ու անոր հանդէպ սէրը ամուր պահել այն անձին՝ որ կը յայտնէ քու սխալներդ առանց որեւէ շահասիրութեան: Եթէ նոյնիսկ խօսքերը խիստ ըլլան ու քու կամքիդ հակառակ, հաճիր ընդունիլ, որովհետեւ քու օգտիդ համար են: Յիմար է ան, որ իր բարեկամը կ'ատէ անոր կողմէ յանդիմանուելու պատճառով:

Միայն թշնամի մի համարեր այն անձը, որ քեզ չարիք կը հասցնէ, այլեւ անոր՝ որ բարեկամ կը համարուի, բայց քեզի չի յայտներ քու սխալներդ եւ իր շահասիրութեան պատճառով կեղծ ու սուտ գովեստով ներբողութիւն կը հիւսէ, որմէ խարուելով վտանգի մէջ կըլլաս ու վատանուն կը դառնաս:

Ճշմարիտ բարեկամութիւնը բոլորին կը պարտաւորեցնէ ընկերոջը բարիք կամենալ ու գործել. իսկ խօսքով կամ գործով սխալուած եղբօրը խրատելն ու յանդիմանելը՝ ընկերոջը բարիք կամենալ ու գործել է: Ուստի ով որ կարողութիւն ունի, սակայն զանց կ'առնէ ու չի ջանար խրատներով կամ յանդիմանութեամբ իր եղբօրը մեղքերէն դարձնել, սիրոյ պատուիրանին դէմ կը մեղանջէ: Ճշմարիտ բարեկամութեան օրէնքը չի կատարեր ան, որ իր բարեկամի որդին անխրատ կը տեսնէ ու չի խրատեր կամ յանդիմաներ:

Եղբայրական յանդիմանութիւնը հաւասար ու համապատիւ բարեկամներու մէջ կը գործադրուի...

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՒԿՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

ՈՒԿՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Ուշագրաւ է նաեւ այն խիստ զաղտնապահութիւնը, որ անոնք կ'ուսնան հմայողի դիմելէ ետք: Հմայութիւնը կը կատարուի նորալուսինի ժամանակ: Այս բոլորը պարզ ու յստակ ցոյց կու տայ, որ գործ ունինք ո՛չ թէ Աստուծոյ այլ՝ մութ ուժերու հետ: Այն հանգամանքը, որ այդ միջոցներով մարդիկ գործնականին մէջ կը բուժուին, կ'ապացուցանէ ուժի մը գոյութիւնը: Եթէ այդ բոլորը պարզապէս բաներ ըլլային՝ որեւէ արդիւնք չէին ունենար: Սակայն, գորտնուկները իսկապէս որ կ'անհետանան, որովհետեւ կա՛յ բան մը, որ կը կատարուի: Յստակ է, որ գործ ունինք դիւային ուժի մը հետ, եւ ա՛յդ է որ կը նպաստէ ապաքինումին:

Հարկաւ շատերը այդ մասին բան չեն գիտեր եւ չեն գիտակցիր: Բայց կան նաեւ անոնք, որոնք գիտեն եւ ատով հանդերձ՝ գիտակցաբար մեղք կը գործեն:

Անգամ մը պատմեցին, թէ մէկու մը երեխան հիւանդացի էր քոսով, եւ ստիպուել էր դիմել բուժակի: Եւ մայրը ըսեր է. «Կ'ուզէ Սատանան ըլլայ, կ'ուզէ Աստուած. միայն թէ օգնեն»: Երբ այդ մասին լսեցի՝ ուզեցի ամբողջ կոկորդով պոռալ:

Այդ գրոյցը տեղի ունեցած է Պրանտենպուրկի մէջ: Միտոս սարսափէն կը նուաղի, երբ այդ խօսքերը կը յիշեմ. «Կ'ուզէ Սատանան ըլլայ, կ'ուզէ Աստուած. միայն թէ օգնեն»:

Շատեր այս կարծիքի են ...


Շարունակելի

ՀԱՍՑԷ

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԻՅ ՅԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿՐՈՒԿԻ՝ 8 ԱՊՐԻԼ, 2012

ԹԻԻ 15

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 16.1-8

Ա. ԶԱՏԻԿ: ՅԻՇԱՏԱԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ



Շարաք օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղեմացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սաղամէն գացին խուկեք գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան: «Ո՞վ պիտի գորէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ներմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Սարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց. «Մի՛ վախճա՛ք, գիտե՛մ որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէ՛ք, բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք զինք հոս դրած էին: Այժմ գացէ՛ք, ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլիա. հոն պիտի տեսնէ՛ք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի»:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարիւրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:

Աստուած իր Որդիին խաղաղութիւնը տուաւ մեզի

«Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ դրուեցաւ» (Ես 53.5): Աստուած առաւ մեր մեղքերուն պատճառած խռովութիւնը եւ գայն դրաւ Քրիստոսի վրայ, եւ առաւ Քրիստոսի խաղաղութիւնը եւ գայն դրաւ մեր վրայ: Քրիստոսի կապուած մարդը իր սրտին մէջ կը կրէ այն խաղաղութիւնը, որ Քրիստոս ինք ունէր: Քրիստոսապարգեւ խաղաղութիւն ո՛չ միայն մեզ խաղաղ կը պահէ փորձութեանց դիմաց, այլեւ՝ յաղթող կը դարձնէ անոնց դէմ: Կեանքի ծովերը միշտ կրնան փոթորկիլ եւ սարսափի ու յուսահատութեան մատնել մարդիկը, բայց անոնք որոնք Աստուծոյ զաւակներն են, անոնք անվրդով կերպով կը շարունակեն իրենց հաւատքի գնացքը յաղթականօրէն:

ՔՐԻՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍՈՒՐԲ ՉԱՏԻԿ

Չատիկ: Յարութիւն Տեանն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի: Եկեղեցա-
կան օրացոյցին մէջ այսպէս ան-
ջատ կերպով յիշուած են Չատիկը
եւ Յարութիւնը:

**1.- Ի՞նչ է Չատիկը քանիս
խնայար:**

Չատիկ բառը ունի բազմաթիւ
բացատրութիւններ: Ոմանք նմա-
նութիւն կը գտնեն Եբրայեցիներու
Պասեփին (Passover) հետ: Պասեփ
կը նշանակէ ելք: Հրեաներու ամե-
նամեծ ու յարգուած տօներէն մէկն
է Պասեփը: Անոնք կը յիշատակեն
Եգիպտոսի ծանր լուծէն իրենց
ազատիլն ու ելքը: Իսկ մենք՝ Քրիս-
տոնեաներս, Յիսուսի չարչարան-
քի արդիւնքով հրաշափառ Յարու-
թեանք կը յիշատակենք մարդկու-
թեան մահուան իշխանութենէն ու
սատանայի ծառայութենէն դուրս
գալը եւ երկնքի արքայութեան ար-
ժանի դառնալը: Յիսուսի կեանքին
վերջին դրուագները տեղի ունե-
ցան հրեաներու Պասեփ տօնին:

**2.- Չատիկուան ժողովրդական
սովորութիւններ:**

Չատիկուան ժողովրդական սո-
վորութիւններէն կարելի է յիշա-
տակել հաւկիթը կարմիր ներկելը
եւ հաւկթախաղը:

Հրեները հաւկիթը կը նրդունէին
իբրեւ տիեզերքի խորհրդանշան եւ
կը հաստատէին թէ հաւկիթին կե-
ղերը կը նշանակէ ցամաքը, սպի-
տակը՝ ջուրը, դեղնուցը՝ կրակը:

Սովորութիւն էր գարնանամու-
տի օրը իբրեւ ընծայ իրարու հա-
կիթ տանիլ, մանաւանդ կարմիր:
Նաեւ ոսկիէ կամ արծաթ շինուած
կարմիր հաւկիթներ կը տարուէին
իշխաններուն, իբրեւ հպատակու-
թեան նշան: Ասիկա արեւելքի մէջ,
մանաւանդ հայերուն եւ
պարսիկներուն մօտ:

Բոլոր կրօններուն մէջ ալ հա-
կիթը իր կարեւոր տեղը ունէր,
մինչեւ իսկ Հռոմէացիները եւ յոյնե-
րը հաւկիթ կը նուիրէին իրենց
աստուածներուն՝ սրբուելու եւ մաք-
րուելու համար:

Հրեաները Պասեփ տօնին կը
պատրաստէին բաղարջ հաց(ա-
ռանց թթամորի հաց): Պասեփ սե-
ղանին վրայ անպայման պէտք էր
ըլլար նաեւ գատկական գառնուկը
եւ պինդ խաշուած հաւկիթը:

Հաւանաբար Պասեփ այս սովո-
րութիւնը փոխանցուեցաւ քրիստոն-
եաներուն:

Չատիկական հաւկիթը Քրիստոն-
եային համար խորհրդանշան է այն
ժայռէ գերեզմանին, ուրկէ Քրիստոս
Յարութիւն առաւ:

**3.- Ի՞նչ է հաւկիթը կարմիր
կը ներկեն:**

Կարմիր ներկը անցեալին ամեն
տեղ չէր գտնուիր: Յայտնի է, թէ
կարմիր ներկին հայրենիքը Արե-
ւելքն է, ուր կը գտնուի որդան
կարմիրը, որմէ կ'արտադրուէր կար-
միր ներկը եւ կը տարածուէր ամբողջ
աշխարհին մէջ:

Հաւկիթը կարմիր ներկելու
աւանդութիւնը կը բացատրուի հե-
տեւեալ ձեւով: Նախ կարմիրը սիրոյ
գոյն է: **Երկրորդ**՝ հայերը բնապաշտ
ժողովուրդ եղած են, եւ բնութեան
մէջ գերընտիր բերքն է որդան
կարմիրը: Ինչպէս որ բնութեան
ծննդաբերութիւններուն մէջ հրաշա-
լի է հաւկիթը, ուստի հաւկիթը կար-
միր ներկելով նուիրագործած են
գայն: **Երրորդ**՝ հաւկիթը կարմիր կը
ներկուի որպէս ուրախութեան նշան:
Չորրորդ՝ կարմիրը կը խորհրդանշէ
նաեւ որպէս գոհի արիւնը, որ կը բա-
ցատրուի իբրեւ Քրիստոսի թափած
արիւնը աշխարհի փրկութեան
համար:

Հաւկիթը կը ներկեն Չատիկուան
նախորդ օրը՝ Շաբաթ օր:

Տէրը իմ լոյսս եւ փրկութիւնս է,
ես որմէ՞ պիտի վախնամ: Տէրը իմ
կեանքիս ապաւենն է, ես որմէ՞ պի-
տի դողամ: (Սաղմոս 27.1)

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

**Այսօր մեր Եկեղեցւոյ մէջ
գործնականապէս եկեղեցական ո՞ր
աստիճանները գոյութիւն ունին:**

**Քահանայ, Վարդապետ, Եպիսկո-
պոս եւ կաթողիկոս:**

**Փոքր աստիճանաւորներուն պաշ-
տօնը կը կատարեն ժողովուրդին գա-
ւակները, առանց եկեղեցական ըլլալու:**

**Աւագ սարկաւագի պաշտօնը կը
կատարեն նոյն ինքն քահանաներ:**

**Վարդապետները, որ շատ սակաւ-
թիւ են հիմա, կը կատարեն առաջնոր-
դի եւ քարոզիչի պաշտօնները:**

**Եպիսկոպոսներն ալ առաջնորդ
կամ քարոզիչ են:**

**Եպիսկոպոսները մէջէն կ'ընտրուին
Երուսաղէմի եւ Կ. Պոլիս պատրիարք-
ները, որոնք Արքեպիսկոպոսի տիտ-
ղոսը կ'առնեն, եթէ արդէն չեն առած:
Պատրիարքները չունին ձեռնադրու-
թիւն եւ օծում. իրենց պաշտօնավա-
րութիւնն ալ տեւական չէ, մա՛նաւանդ
Կ. Պոլսիւնը:**

**Կաթողիկոսները եպիսկոպոսներու
մէջէն կ'ընտրուին ընդհանրապէս:
Այժմ երկու Կաթողիկոսութիւն ու-
նինք, Ս. Էջմիածնի եւ Կիլիկիոյ:**

**Էջմիածինը Մայր Աթոռ է եւ Կա-
թողիկոսը Ամենայն հայոց:**

**Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իշ-
խանութիւնը կը տարածուի միայն Կի-
լիկիոյ թեմերուն վրայ:**

**Եօթը խորհուրդներու մասին ի՞նչ
խորհրդածութիւն կարելի է ընել:**

**Գրիգոր Տաթևացի կ'ընէ երեք
շարք խորհրդածութիւն, որոնց երկ-
րորդն է հետեւեալը:**

**Եօթը խորհուրդները կը պատ-
րաստեն մեզ իւրաքանչիւր եօթը առաքի-
նութիւնները...**

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

**ՓՈՐՉՈՒԹԵԱՆՑ ՄԷՉ
ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ
ՕՐԻՆԱԿՈՎ**

**ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՄԱԿԷՆ
12.1-7**

*Ուրեմն մենք ալ, որ այսքան բազ-
մաթիւ վկաներով շրջապատուած
ենք, վանենք ամէն խոչընդոտ եւ մէկ
կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիւրաւ կը
պաշարէ, եւ համբերատարութեամբ
պայքարինք մեզի ներկայացող փոր-
ձութիւններուն դէմ: Մեր աչքերը յա-
րենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնա-
դիրին ու կատարելագործողին, որ
գիտնալով թէ ի՞նչ ուրախութիւն կը
սպասէ իրեն՝ արհամարհեց ամօթը,
յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ եւ
Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ:*

*Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ
չտկարանաք, մտաբերեցէ՛ք, թէ Յի-
սուս ինչպիսի համբերութեամբ կրեց
մեղաւորներու հակառակութիւննե-
րը: Դուք տակաւին ձեր արիւնը թա-
փելու չափ դիմադրութիւն ցոյց
չտուիք մեղքի դէմ պայքարին մէջ:*

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՄԱԿԷՆ 12.5-9

*... Ուստի համբերութեամբ
ընդունեցէ՛ք Աստուծոյ խրատը գիտ-
նալով՝ որ հօր մը պէս կը վարուի ձե-
զի հետ: Կա՞յ գաւակ մը, որ իր հօրմէն
յանդիմանութիւն ստացած չըլլայ:
Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ
չյանդիմանէ՝ ինչպէս կ'ընէ իր բոլոր
որդիներուն, կը նշանակէ՝ թէ իր գա-
ւակները չէք եւ խորթ էք իրեն: Մեր
մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդի-
մանեն, կը դադրի՞նք գիրենք յարգե-
լէ: Ո՛չ: Ուրեմն, որքան աւելի եւս
հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու
հօր, որպէսզի կեանք ունենանք:*

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

1.15-23

Համբարձումէն քանի մը օրեր ետք, երբ շուրջ հարիւր քսան հաւատացեալներ մէկտեղուած էին, Պետրոս ոտքի ելլելով ըսաւ. «Եղբայրներ, պէտք էր կատարուեր Սուրբ Գիրքին մէջ գրուածը, այն ինչ որ նախօրօք Սուրբ Հոգին ըսած էր Դաւիթի բերնով՝ Յուդայի մասին, որ Յիսուսը ձերբակալողներուն առաջնորդողը եղաւ: Յուդա մեր խումբէն էր, մեզի պէս առաքելական ծառայութեան համար ընտրուած: Բայց իր անիրաւ մատնութենէն ետք, որուն վարձով ազարակ մը գնեց, երեսն ի վայր ինկաւ այնտեղ եւ փորը նեղեցելով՝ փորոտիքը դուրս թափեցաւ: Բոլոր երուսաղէմացիները այս մասին իմացան, եւ այս պատճառով ալ այդ ազարակը իրենց բարբառով «Ակեղ-դամա», այսինքն՝ «Արեան ազարակ» կը կոչեն: Արդ, Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է. «Թող անոր տունը աւերակ մնայ, եւ մարդ հոն չբնակի»: Իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Իր պաշտօնը ուրիշ մը թող առնէ»: Այստեղ կան մարդիկ որոնք միշտ մեր հետը եղած են Տէր Յիսուսի երկրաւոր առաքելութեան ամբողջ տեւողութեան, Յովհաննէսի ձեռքով անոր մկրտութենէն մինչեւ երկինք համբարձման օրը: Աստուծոյ մէկը պէտք է որ տասներմէկիս միանայ՝ Քրիստոսի յարութեան վկայ ըլլալու համար»:

Այն ատեն հաւատացեալները երկու հոգի ներկայացուցին. Բարսաբա կոչուած Յովսէփը, որ Արդար մականւանուեցաւ, եւ Մատաթիան:

Ապա հետեւեալ աղօթքը ըրին. «Դուն, Տէր, որ կը փնտրես բոլոր մարդոց սիրտերը, ցոյց տուր մեզի թէ այս երկուքէն ո՞ր մէկը կ'ընտրես առաքելական այս պաշտօնին համար, որմէ Յուդա ինկաւ՝ ինքն իր նամբան երթալու համար»:

Ապա երկու անուններուն վրայ վիճակ ձգեցին: Վիճակը Մատաթիային ելաւ, եւ անիկա տասներմէկ առաքելներու կարգին դասուեցաւ:

Ի՞նչ կը նշանակէ Հայ Եկեղեցի:

Հայ Եկեղեցի կը նշանակէ եկեղեցի հայերուն, այսինքն՝ եկեղեցի մը, որ ի բնէ կը պատկանի հայ ազգին կամ հայ ժողովուրդին: Ասոր համար կ'ըսուի նաեւ Հայոց Եկեղեցի:

Ի՞նչ կը նշանակէ Մայրենի Եկեղեցի:

Հայ Եկեղեցին հոգեւոր մայրն է իր ժողովուրդին եւ ժողովուրդն ալ հոգեւոր գաւակն է անոր: Որովհետեւ ժողովուրդը մկրտութեամբ հոգեւորապէս կը ծնի անոր ծոցէն, անկէ կ'առնէ իր հոգեւոր սնունդը եւ կը պաշտպանուի անոր հովանիին տակ ընդդէմ իր հաւատքին, բարոյականին եւ թշնամիներուն: Այս պատճառով կ'ըսուի ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻ: